# ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

**Կ. Յուլիոսի Կեսարու ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ**, *թարգմանութիւն* Հ. Ա. Վ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՑ:

**Կ. Տակիտոսի՝ ԱԳՐԻԿՈԼԱ, ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԶՀՌԵՏՈՐԱՑ:**

**ԸՆԴ ԵՂԵՒՆԵԱՒ ՅԱՄԱՅՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՎԱՅՐԻ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Հ. Ղ. Ա.** — *Հեղինակն այս գրութեամբ անգորր ամայութեան մէջ իբրև եղևնի ծառոյ մը տակ առանձնացած, կը խօսակցի բնութեան հետ, վերանալով մտօքը մինչև 'ի խորս անցեալ ժամանակաց և աստուածային Տեսչութեան: Կընկարագրէ բնութեան գեղեցկութիւնը, և կը բաղդատէ զայն մարդկային կենաց, ազգաց և դարուց հետ. մէկը կը գտնայ միշտ նոր և միշտ անթառամելի, և միւսն դիւրաթառամ և փոփոխելի: Ի մէջ կը բերէ զՏիւրոս և զՍիդոն, զԿարքեդոն և զԵգիպտոս, զՀռովմ և զՅունաստան. 'ի քննութիւն կ'առնու նոյն ազգաց փառաց յիշատակները, որովք կը կարծէին յաւերժանալ յաշխարհի. և կը գտնայ որ թէ իրենք և թէ իրենց յիշատակները սափորի մը պէս փշրեցան և դոգցես անհետացան, վկայելով աշխարհի իրաց ունայնութեան:*

*Բայց կը դառնայ ու կը հարցնէ, թէ արդեօք յունայնութիւն միայն հաստատեալ էր մարդ, և րնել միայն երկրիս վրայ և ապա անհետանալ իր գործոց հետ: Կը ցուցընէ թէ ոչ. այլ հանդերձեալ մ'ունէր իր առջին, որուն համար ստեղծուած էր. բայց որովհետև աղօտացած էր այս ճշմարտութիւնը խաւարաւ հեթանոսութեան, երևեցաւ Փրկիչն աշխարհի, միւսանգամ արծարծել զայն: Իրմով լռեցին աշխարհակալք հնոյ աշխարհին, և տարածեց իր թագաւորութիւնն ընդ ամենայն երկիր 'ի ձեռն ձկնորսաց ոմանց. որոնք փոխանակ հեթանոսական դառն և ծառայական դրօշուց, տնկեցին զդրօշ քառաթև խաչին 'ի նշան ազատութեան. օրուն թագաւորութիւնը կը տևէ մինչև ցայսօր, և պիտի տևէ մինչև ցկատարած աշխարհի. յորում՝ երբ լռէ աշխարհ յամենայն զբաղմանց իւրոց, պիտի երևնայ նոյն խաչանիշ դրօշն 'ի նշան պարտութեան մահու և երջանիկ յարութեան:*

*Ապա վերջ տալով բանիցը, կը յորդորէ զմեծամեծս երկրի և զհաւատացեալս կեալ այնպէս ինչպէս կը պահանջէ Յիսուս, սրբութեամբ և արդարութեամբ. վաստակել և պատրաստել պաշար ու ռոճիկ անանցական կենաց համար. առաջի աչաց ունելով 'ի նպատակ զԱյն, որ է Ճանապարհ և Ճշմարտութիւն, Յարութիւն և Կեանք:*

**ԳՈՐԾԱՒՈՐՔ.** — *Ինչպէս անունն իսկ կը վկայէ, ասիկա ժողովրդական գիրք մ'է, իտալերէնէ թարգմանուած. որուն նպատակն է բարուքել արուեստաւորաց բարոյական ու նիւթական վիճակը, ջանալով տպաւորել իրենց մտաց մէջ բարեկարգ կենաց, ժուժկալութեան, չափաւորութեան, խնայութեան և փոխխակի ձեռնտուութեան գեղեցիկ սկզբունքներ:*

*Գիտենք որ ոսկւոյ անունն և իրեն դիւթիչ զօրութիւնը կը խաբէ միշտ զմարդիկ. զոր վերպակաւ անմիջական երջանկութեան պատճառ համարելով, հետամուտ կ'ըլլան ու և է եղանակաւ ձեռք բերել զայն, խիղճ չընելով անկլխտանալ նոյն իսկ և 'ի մեծամեծ ապիրատութիւնս:*

*Բայց ահա այս գրքոյկը զոր կը հրատարակենք, կը սորվեցնէ տէր ըլլալ ոսկւոյ անվտանգ և առանց խայթի խղճմտանաց. հանգիստ ապրելով, նիւթական և բարոյական վիճակը լաւցնելով, միանգամայն աստուածային ու մարդկային օրինաց պատկառ կալով. Կը ցուցընէ որ ճշմարիտ ոսկւոյ հանքն 'ի մեզ է, և կը կայանայ մեր ուժին, աշխատութեան, յաջողակութեան և կամաց վրայ. ուսկից առաջ եկած են աշխարհիս ամեն հարստութիւնք:*

digitised by A.R.A.R.@